Ծուշանիկ Կուրղինյան

Լսո՞ւմ ես, ընկեր, հեռու խորքերից . . .

Լսո՞ւմ ես, ընկեր, հեռու խորքերից
Կատաղի հողմի վայրագ խշխշոց .
Տարերք են լալիս, շանթի որոտից
Խուլ արձագանքով լսվում դղրդոց:

Այնտեղ կռվում են գոյության համար
Երկիրն ու ջուրը դեմ առ դեմ կանգնած՝
Կատաղի հողմը թափով սանձահար
Մահահոտ շնչով նրանց է խառնած:

Այնտեղ լեռները լերկ, կոշտ կրծքերով,
Կախվել են անսաս ձորի եզերքին,
Խեղդել են ուզում անզուսպ տենչանքով
Կուրծքերը քերող հուժկու հոսանքին:

Գոռում է ալին, զայրույթով ըմբոստ,
Ճերմակ փրփուրը դեմքին կատաղած .
Սև հսկաներին որպես չնչին ոստ
Կուզե տապալել, փշրել անկասկած:

Սակայն լեռները անհողդողդ սրտով
Խեղդում են, փշրում հրե բլուրներ,
Ու խրած հողում, հոգով անխռով

Նայում կատաղած ջրին անտարբեր:

Լսո՞ւմ ես, ընկեր, հողմը մերձ ի մահ
Ուժասպառ պարտված . . .
Հեղեղը իջավ . էլ կռիվ չկա,
Ժայռերի կրծքին արևն է շողում:

Եվ ալիքները թաղման հանդեսի
Տխուր երգելով հոսում են առաջ .
Նրանց ջինջ կրծքին բռնակալ ուժի
Դիակն է ընկած՝ կուրծքը պատռված:

1906